**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2**

**ԷԷՀՕ-ԳՀԾՁԲ-26/1 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ**
**ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

**ք. Երևան** **03 մարտի 2026թ.**

2026թ. փետրվարի 19-ից մարտի 03-ը, ՀՀ, ք. Երևան, Աբովյան 27 հասցեում գտնվող «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի տեղի ունեցավ նյութական արժեքների գնահատման ծառայության ձեռքբերման թիվ ԷԷՀՕ-ԳՀԾՁԲ-26/1 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

Մ. Սարունգույյան՝ «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի ՀՁՏԲ պետ,

Ժ. Ավագյան՝ «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի աշխատակազմի առաջատար ճարտարագետ,

Հ. Մկրտչյան՝ «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ,

Ա. Բաղիկյան՝ «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի ջրի և կոյուղագծի սպասարկման բանվոր, պարետի պարտականությունները կատարող:

Հաշվի առնելով, որ բացակայում էր Հանձնաժողովի նախագահ «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի աշխատակազմի գլխավոր մասնագետ՝ Լ. Երիցյանը, Հանձնաժողովի նիստը նախագահում էր Մ. Սարունգույյանը, որին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ս. Մելքոնյանը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի չորս անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված Հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջը համարվում է պահպանված, իսկ նիստն իրավազոր, որպիսի փաստով պայմանավորված Հանձնաժողովի նիստը հայտարարվեց բացված:

**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳ**

1. Գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների մասին:
2. Ընթացակարգին ներկայացված հայտեր պարունակող ծրարները գնահատելու մասին:

3. Բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության մասին:

4. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:

5. Ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարելու մասին:

6. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու և անգործության ժամկետ սահմանելու մասին:

7. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

8. Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին:

## 1. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2026թ. փետրվարի 19-ին, ՀՀ, ք. Երևան, Աբովյան 27 հասցեում գտնվող «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի շենքում ժամը 11:00-ին նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված գնման գինը.

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված գնման գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1-ին | Նյութական արժեքների գնահատում | 500,000.00 |

Ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԾՐԱՐՆԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընթացակարգին մասնակցելու հայտ/եր/ է/են/ ներկայացրել հետևյալ անձ/ը/ինք/ /այսուհետ՝ նաև Մասնակից/ներ/ը/.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Հասցեներ | Հեռախոս | Էլ. Փոստ | ՀՎՀՀ |
|---|---|---|---|---|---|
| 1 | «Վի ԷՄ-ԱՐ Փի» ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Վարդանանց փակուղի 8, թիվ 209 սենյակ | +37410588797 | vm-rp@mail.ru | 09212841 |
| 2 | «Տարոն Վարդանյան Արտուրի» ԱՁ | ք. Վանաձոր, Չուխաջյան թղմ. 29/11 | +37495422949 | taron-v@mail.ru | 67088635 |
| 3 | «Էքսպերտ Քլաբ» ՍՊԸ | ՀՀ, Արարատ, Գետափնյա 10փ. Շ7 | +37477727011 | expertclub.am@mail.ru | 04430491 |
| 4 | «ՋիՔյու | ՀՀ, Ք. Երևան, Նոր Նորքի | +37499661766 | consultingGO@gm | 01058562 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Քոնսալթինգ» ՍՊԸ | 4-րդ զանգ., Ա. Բակունցի 2-րդ նր., 130 բն. | | ail.com | |

Հանձնաժողովը գնահատեց հայտ կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և արձանագրեց, որ Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմված և ներկայացված են Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ սահմանված պահանջներին համապատասխան:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

## 3. ԲԱՑՎԱԾ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԾՐԱՐՈՒՄ ՊԱՀԱՆՋՎՈՂ (ՆԱԽԱՏԵՍՎԱԾ) ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը գնահատեց բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին, ինչպես նաև արձանագրեց, որ Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ պահանջված փաստաթղթերը առկա են և կազմված են սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ **«Տարոն Վարդանյան Արտուրի» ԱՁ**-ի, ում կողմից Հավելված N 1-ով ներկայացվող դիմում-հայտարարության փաստաթղթում բացակայում է Ընթացակարգի հրավերով պահանջվող սպասարկող բանկի ու բանկային հաշվեհամարի վերաբերյալ տեղեկատվությունը:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

## 4. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԱՅԴՊԻՍԻՆ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած Մասնակից/ներ/ի գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը.

ՀՀ դրամ

| Գնման առարկայի | | Մասնակցի անվանում | Գնման հայտով սահմանված գնման գինը | Մասնակիցների առաջարկած գները | | |
|---|---|---|---|---|---|---|
| N | անվանումը | | | արժեք | արժեք | Ընդհանուր գինը |
| 1-ին | Նյութական արժեքների գնահատում | «Վի ԷՄ-ԱՐ ՓԻ» ՍՊԸ | 500,000.00 | 2,250,000.00 | 450,000.00 | 2,700,000.00 |
| | | «Տարոն Վարդանյան Արտուրի» ԱՁ | | 197,700.00 | - | 197,700.00 |
| | | «Էքսպերտ Քլաբ» ՍՊԸ | | 330,000.00 | - | 330,000.00 |
| | | «ՋիՔյու Քոնսալթինգ» ՍՊԸ | | 300,000.00 | - | 300,000.00 |

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

2026թ. փետրվարի 26-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ներկայացված տեղեկատվությունը ընդունել ի գիտություն:
2. Հանձնաժողովը հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները՝ որոշեց նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և առաջարկել Մասնակից/ներ/ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել շտկման ենթակա արձանագրված անհամապատասխանությունը:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

2026թ. մարտի 02-ին Հանձնաժողովն արձանագրեց, որ.

1. Մասնակից/ներ/ի կողմից սահմանված ժամկետներում ներկայացվել են հանձնաժողովի կողմից արձանագրված թերությունների շտկված տարբերակները:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

2026թ. մարտի 03-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:
2. Գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:
3. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 1-ին | «Վի ԷՄ-ԱՐ ՓԻ» ՍՊԸ | բավարար |
| | «Տարոն Վարդանյան Արտուրի» ԱՁ | բավարար |
| | «Էքսպերտ Քլաբ» ՍՊԸ | բավարար |
| | «Ջիքյու Քոնսալթինգ» ՍՊԸ | բավարար |

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

2026թ. մարտի 03-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշել և հայտարարել ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցներին, որոնք ներկայացված են ստորև բերվող աղյուսակում.

ՀՀ դրամ

| Չափաբաժնի N | Մասնակցի անվանումը | Ընտրված մասնակցի դեպքում նշվում է "X" | Մասնակցի առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ |
|---|---|---|---|
| 1-ին | «Վի ԷՄ-ԱՐ ՓԻ» ՍՊԸ | | 2,250,000.00 |
| | «Տարոն Վարդանյան Արտուրի» ԱՁ | X | 197,700.00 |
| | «Էքսպերտ Քլաբ» ՍՊԸ | | 330,000.00 |
| | «Ջիքյու Քոնսալթինգ» ՍՊԸ | | 300,000.00 |

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

## 5. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով վերոգրյալը, 2026թ. մարտի 03-ին Հանձնաժողովը որոշեց, որպես Ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով ընտրված և այդպիսին չճանաչված մասնակից հայտարարել սույն արձանագրության 4-րդ կետով ներկայացված աղյուսակում նշված՝ հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից այն մասնակիցներին, ովքեր ներկայացրել են նվազագույն գնային առաջարկ:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

## 6. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Ս. Մելքոնյանը Հանձնաժողովին ներկայացրեց պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Հանձնաժողովը որոշեց.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:
2. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

## 7. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ չեն կատարվել:
2. Գնման ընթացակարգի շրջանակում հարցումներ չեն ներկայացվել և պարզաբանումներ չեն տրվել:
3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:
4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

## 8. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց պայմանագրերի նախագծերը:

Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել պայմանագր/եր/ի նախագ/ի/ծ/եր/ը,

2. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված ճանաչված մասնակից/ներ/ին ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ սահմանված ժամկետում պայմանագիրը չստորագրելու, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում մասնակիցը կզրկվի պայմանագիրը կնքելու իրավունքից՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Մ. Սարունգուլյան ____________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Ժ. Ավագյան ____________

Հ. Մկրտչյան ____________

Ա. Բաղիկյան ____________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Ս. Մելքոնյան ____________